

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ԳՐԱԿԱՆ ԷՋՆԵՐ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՅՅԱԼԻՑ

Թանասիր. գիտ. դոկտոր Շ. Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների շուրջը գեղարվեստական ինքնուրույն և ամբողջական ստեղծագործություններ երևան են գալիս XVIII դարում: Դրանք հայ նոր և ընդհանուր վերանորոգվող շարժման, հայ ազգային ազատագրական պայքարի դրական առաջին արձագանքն են:

Սույն ակնարկի խնդիրն է ներկայացնել մեզ հայտնի այն երկերը միայն, որոնք դուրս են մնացել հայ գեղարվեստական գրականության պատմության ընդհանուր շարադրանքից և որոնք պատմագեղարվեստական արժեք ունեն: Դրանց թիվը հասնում է մի քանի տասնյակի՝ «Անցք և սրտամութին Մեծին Պետրոսին և Մարկոսի Միրզախանովին, որոյ ձեռամբն ազատեցաւ Մեծն Պետրոս», «Վասն տեսլեան իմոյ», «Ճանապարհորդութիւն Պետերբուրգից Պօլիս և վերադառնալս ի Պետերբուրգ», «Ը նուազիլն հայոց ազգի», «Զորավար է էմին փաշան», «Ընդ ծով կարմիր անթաց ոտիւք», «Ի վայրի ծաղկազարդ, ի գնացս ջուրց քաղցրիկ...», «Ահ անքնին խորոցն էին», «Աստուած հզօր ամենակալ», «Յորժամ հառանէր լուրն խաղալոյ անյաղթ», «Յոհաննիսի Պէրճ իշխանի», «Ասացեալ զայս իմոյ բանի», «Կայսր բարի և իմաստուն», «Կայսրուհիդ տասնամեայ կրոց ծիրանի», «Երբ ողջունէր կայսեր մեծին», «Թագ և պարծանք տունն ռուսաց», «Ի սուրբ ցեղէ ընտրեալ», «Արդ, օրինակ քեզ մեր արի Սիւնեաց իշխանս», «Առ դրանս կայսեր բողոք ունեմ» և այլն: Նշված ստեղծագործություններից առաջին երեքը գեղարվեստական արձակի նմուշներ են՝ զրույց, տեսիլ, ուղեգրություն (որոնց կանդորադառնանք առանձին), իսկ մնացածը՝ քնարական, պատմաքնարական բանաստեղծություններ և պոեմներ, որոնք, շնչին բացառությամբ, ստեղծվել են XVIII դարում և XIX-ի առաջին տասնամյակներում: Այս երկերը նույն ժամանակաշրջանից արդեն հայտնի կամ լայն ճանաչում գտած համապատասխան ստեղծագործությունների հետ միասին, վերանորոգվող հայ գեղարվեստական գրականության մեջ ստեղծում են մի նոր շերտ, բերում նոր խոհեր, նոր հերոսներ, նոր բնավորություններ և նոր միջավայր¹: Ռուսաստանի ազգային, ազատագրական ու տրամադրություն ունեցող երկերում հայ ժողովրդի ազգային, քաղաքական կյանքի ու պայքարի, նրա գոյատևության ու վերածննդի համար

¹ Այս կարգի գրական ստեղծագործությունների զգալի մասը (հիմնականում XIX դարի համապատասխան ուսումնասիրությամբ) ընդգրկված է Պ. Հակոբյանի «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ» (Երևան, 1978) գրքում:

մատնանշվում են երկու ճանապարհ, երկու ուղի: Առաջինը Ռուսաստանին հետևելու, նրան ընդօրինակելու, նրանից սովորելու ուղին է, երկրորդը՝ Ռուսաստանին միավորվելու, նրան զինակցելու, նրա դաշնակցությամբ պարսկա-թուրքական լծից ազատվելու ուղին:

Դիմադրողական, մաքառողական պայքարի մեջ ազգը ոչ թե կորչում, ոչնչանում է, այլ աճում, բազմանում է,— գրում է «Նոր տեսլակ, որ կոչի Յորդորակ» երկի բանաստեղծ և հրապարակախոս հեղինակը: Թող մեզ զորավիգ լինի մեր ժողովրդի հերոսական անցյալը և ուս ազգի կյանքի փորձը, ազգ, որ աներևակայելի տոկոսնություններ և խիզախությամբ կանգնելով ահեղ թշնամիների դեմ-հանդիման՝ հաստատեց իր ազատությունը և բարգավաճեց, զորացավ «նորումս քան զամենայն»:

Ձի ոչինչ ազգ ի պահել զազատութիւնս իւր
Ի պատերազմիւն երբէք յիւրմէ ինչ պակասեցաւ,
Եթէ ոչ և մանաւանդ օր քան զօր աճելով
Եւ բազմանալով, ուռճացաւ, պերճացաւ:

Ահաւասիկ այնքան նուաստագոյն ազգն ուսաց,
Որպէս ի նորումս քան զամենայն դօրացաւ,
Թափելով ինքնին զինքն ի դրացեաց հալածելոյն,
Մինչև ի տիեզերակալ լինիլ մարթացաւ²:

«Տէ՛ր զօրացուցասցէ՛ս զնոսայ (ոուսներին— Շ. Ն.) և զմեզ դուռն ողորմութեան բացցէ, շնորհիւ իւրով».— արձագանքում է Թադեոս Զուղայեցին: Լուսամիտ բանաստեղծը վերարժարծելով իր «Ողբ Հայաստանեաց» ծրագրային պոեմի խորհուրդը, հայ ժողովրդին, հայոց երիտասարդությանը կոչ է անում լուսավորվել ուս ժողովրդի օրինակով. «Եղ մեզ օրինակ ազգն ուսաց,— գրում է Թադ. Զուղայեցին 1787 թ. Պետրոս Առաջինի կենսագրության թարգմանության առիթով,— եթէ որպէս ընտրեալք և ի սիրողք եղեն ուսման և ի ձեռն մարզի և որպէս փայլին այսօր գրեթէ պէրճք կորովիւք և յաղթող դտան ի մէջ ամենայն ազգի և փայլին ամենայն երջանկութեամբ...»³: Թ. Զուղայեցին հորդորում է՝ ճանաչել ուսման, գիտության հարգը, կրթության սերմերը տարածել ժողովրդի մեջ: «Արդ, ո՛վ ազնիւք և բարեսեր ընթերցողք,— շարունակում է բարոյախոս բանաստեղծը,— դուք ինքնին բարէպէս գիտէք, որ սերմանելն զիմաստութեան ի մէջ հասարակաց և ի տեղիս-տեղիս տալ բանալ կրթարանս զանազան լեզուաց և սփռել զիմաստութիւնս ի մէջ ժողովրդոց և տալ տպել զհնագոյն պատմութիւնս առ ի օգուտ ազգին և ի ընթերցումն հասարակ ժողովրդոց»⁴:

Ազգային լուսավորության գործը նորովի առաջ վարելու, արվեստների և գիտությունների մեջ հմտանալու համար բանաստեղծը մատնանշում է Ռուսաստանի և նրա «բարի և իմաստուն» կայսր Պետրոս Մեծի նախընտրած ճանապարհը: Այս նույն տրամաբանությամբ նա գրում է կայսրին նվիրված իր երգը: Դա ուս ժողովրդի պատմական մեծ դործչին նվիրված հայերեն

² «Նոր տեսլակ, որ կոչի Յորդորակ», Մադրաս, 1772, էջ 36:

³ Թադեոս Զուղայեցի, Տետրակ. որ կոչի Ողբ Հայաստանեաց, Մադրաս, 1971, էջ 22, 26:

⁴ Նույն տեղում, էջ 26:

առաջին տպագիր բանաստեղծությունն է: Պարզ հյուսվածքով ու ոճով, անմիջականորեն, քնարական ճշմարիտ հույզերով Խ. Զուղայեցին ներբողում է Պետրոս Առաջինին, որ իմաստությամբ ու անօրինական խիզախումներով «սխալուհեց» Ռուսաստանի դարերով «խափանեալ մտաց քողը», լուսավորեց «խափարեալ անձանց» սիրտն ու հոգին, արմատահանեց ազգի մեջ հասարակված վնասակար բարքերն ու սովորությունները և արիություն ներարկեց յուր ազգին:

Կայսերոս բարի և իմաստուն,
Յորժամ եղև սա բանիբուն,
Ազգն հաւար, անիմաստուն,
Ջարթոյց քնոյ, արար արթուն:
Բանիւ իւրով ուշիմացեալ,
Բոյս նորատունկ ազգին եղեալ...
Խփեալ մտաց քօղ պատառեալ,
Եւ քան զբազումս առաւելեալ:
Նսեմ վարուք խաւարացեալ,
Լուսաւորեաց զանձինս մոլեալ.
Զքնաղ սիրո պտուղ տուեալ,
Ճանն ետ ազգին արիանալ:

Հայ ազգային ազատագրական շարժումների, հայ և ռուս ժողովուրդների քաղաքական դաշնակցության՝ Դավիթ Բեկից մինչև Հովսեփ Էմին և Շահամիրյաններն ընկած ժամանակահատվածում են ծնվել «Ի նուազիլ հայոց ազգի», Զօրափար է էմին փաշան», «Վասն տեսլեան իմոյ» և այլ երկեր: Սյունիքի ազատագրական կռիվների ականատես, ժողովրդական բանաստեղծ Սահակ Երեցը հորդորում է Դավիթ Բեկի հզոր զինակից «Քաջն զինուոր տէր Աւետիսին»՝ ետ դառնալ հուսահատական միանձնությունից, կրկին ռազմի դաշտ մտնել, առաջնորդել հայ դյուցազններին, ազատագրել հայոց սրբազան հողը բռնակալներից: Ժողովուրդը փառաբանում, մեծարում է իր ազգային հերոսին, ժողովուրդը քաջալերում, հուսադրում է նրան և թախանձում՝ կրկին մարտադաշտ ելնել և առաջնորդել իրեն:

Ի նուազիլ Հայոց ազգի,
Ի դառն և նեղ ժամանակի,
Յաղթող, զօրեղ երևեցար,
Քաջն զինուոր տէր Աւետիս:
Սարսին ի քէն ազգն Տաճկաց,
Զի յաղթեցեր նոցին զօրաց.
Ջարքայական զէնն Քրիստոս,—
Տէր Աւետիս, քեզ պարգևեաց...
Հասեր արագ Բերդն Մեղրին,
Սատակեցեր ըզխարաճին,
Երեսն հազար թուղթ խարաճին,
Այրեցեր ի մէջ կրակին,
Ազնիւ զօրօք քաջ և ընտիր,

5 Նույն տեղում, էջ 27: Այս բանաստեղծությանը անդրադարձել է գրականագետ Մ. Մխիթարյանը իր «Հարություն Շմավոնյանը և նրա գործակիցները» հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4):

Ազուլեաց դաշտն ձէպէիր.
 Անարգողաց սրբոյ հաշին —
 Տէր Աւետիս վրէժխնդիր,
 Կրկին խնդրեմք արիանալ,
 Պալի Պէկին զինուորանալ.
 Հայոց ազգին թեւ և թիկունք,
 Տէր Աւետիս, բարեա՛ւ երթաս:
 Էրէջս ապիկար, անարժան,
 Խնդրեմք սրբոցն համանգամայն.
 Խաշեալ Աստուած տէր իմ Ծիսուս,
 Տէր Աւետիս քեզ պահապան՝:

Դավիթ Բեկին ժամանակակից Սահակ Երեցի այս գեղեցիկ, մարտաշունչ երգը XVIII դարի հայ ազատագրական այդ մարտերի շուրջը հյուսված, մեզ հայտնի միակ քնարական ստեղծագործությունն է: Բանաստեղծը պատմությունը չի եղծում, չի գունազարդում, այլ շնչավորում, վերակենդանացնում է. բարձրացնում է իր ազատատենչ ժողովրդի ձայնը, հայտնում նրա կամքը, մեկնում նրա միտքն ու հոգին. «Եւ տէր Աւետիսն ի նոյն Հալիձոր շօրեքհարիւր (400) արամբ», — գրում է ժամանակակից պատմագիրը զինված ուժերի մասին: «Այս տէր Աւետիս արար զբազում մեծամեծ քաջութիւնս, որպէս և ի պատմութեանս իսկ տեսնի. գի էր կարի քաջ և արիասիրտ, և զօրաւոր յոյժ բանիւք և զործովք և վասն այսորիկ նա յորմէ հետէ հեռացեալ ի հայրենի երկրէն պանդխտացաւ ի Գաղղիայ, բազումք յորդորէին զնա ի հայրենի նորին գաւառէ, անդրեն դառնալ առ նոսա և պաշտպանել զերկիրն զայն, բայց նա հրաժարէր յաղագս պասուույ իւրոյ քահանայական կարգին, որպէս և ոմն յարգելի երիցանց անտի գրեալ առ նա զայս ոտանաւոր առ նոյն յորդոր»⁶:

Դարձյալ հազվագեպ ու ավարտուն քնարական մի պատկեր է «Սարասկէրտը էմին փաշայ» («Զորավար է էմին փաշան») սկսվածքով հայատառ թուրքերեն երգիծական երգը: Մեզ չհաջողվեց որոշել այս բանաստեղծության պատմականության բուն սահմանը կամ իմանալ թե ով է էմին զորավարը, փաշան⁸, սակայն անտարակույս, իրական փաստի և ապրած հույզերի վերարտադրություն է այն, ուստի զինվորի պայքարի ու հաղթանակի և թուրք սարսափող զինվորի ապրած տղբերգության ժողովրդական արձագանք, չափաբերված մի հուշ, որ թողել է մեզ հայ բանաստեղծը (երգիծական այս խաղի եղանակով է երգվել XVIII դարի բանաստեղծ Գրիգոր Օշականցու «Զօրէլ փշումն ուժգին հողմոյ»⁹ հայրենասիրական բանաստեղծությունը): Այս երգը, հավանաբար երգվել է նաև զինվորների շրջանում. սահուն ու թմով, կարճ տողերով, պարզ հանգով ու վարակիչ անմիջականությամբ, թուրք զինվորի բերանով ասված այս փոքրիկ խաղը պատմական ուշագրավ մի իրադրության նկարագիր է: Մարտի մեջ են էմին փաշայի՝ ուստի քաջերից բաղկացած

6 «Բաղսավիպ», 1938, № 6—9, էջ 187: Ս. Վ. Արամյան, Դավիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցոց», Վենետիկ, 1978, էջ 144—145:

7 «Բաղսավիպ», 1938, № 6—7, էջ 187:

8 Կարո՞ղ էր արդյոք բանաստեղծը նկատի ունենալ հայ ազգային ազատագրական պայքարի գործիչ Հովսէփ էմինին:

9 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 10291, էջ 26ա:

դորախումբը՝ իր հրետանավորներով ու նավաստիներով և Մուսա փաշայի թուրքական աղքատ ու լքված, ջարդված ու սպարտված դորախումբը, որի հրետանավորները կրակել չգիտեն, նավաստիները նավարկել չգիտեն, սուլթանից օգնություն չկա, և բոլորը դերի են հանձնվում «գյավուր Մոսկովին».

Զորավար է էմին փաշան, ֆ
Հրամանն անցնում է ամեն տեղ,
Փախավ, պարտվեց Մուսա փաշան.
Գերի դարձանք շեկ գյավուրին:
Մեր գրպաններում չկա փարա,
Մեր սիրտն ու հոգին դարձել է յարա,
Այլևս մեզ փրկություն չկա.
Դերի դարձանք շեկ գյավուրին:
Հրետանավորն է նշանառու,
Նավաստին է քաջ նավավար,
Սալդաթներն են հոգեառ.
Գերի դարձանք շեկ գյավուրին:
Հրետանավորը կրակել չի կարող,
Նավաստին՝ նավարկել չի կարող.
Սուլթանից մեզ օգնություն չիք.
Ողջ գերի դարձանք, ողջ դերի դարձանք
Շեկ Մոսկովին մենք¹⁰:

10 Նույն տեղում, ձեռ. № 6440, էջ 8ա—8բ: Ստորև ներկայացնում ենք երգի բնագիրը ըստ ձեռագրի: Հայերեն թարգմանությունը կատարել է Օ. Եզանյանը:

Խաղ ի գոյն՝ Զօրեղ փշումի

Սարասկէրտր էմին փաշայ,
Հօքմի կէշար տաղու տաշայ,
Փօղղուն վէրտի Մուսա փաշայ.
Հապ հսիր օլտուխ սարի կեաուր ալինտան:

Ճիպիմիդտայ հօխտուր փարայ,
Ճիկարմզ օլուփ հարայ,
Տահայ օլմազ պիզայ շարայ.
Հապ հսիր օլտուխ սարի կեաուր ալինտան:

Դօփճիլար դօփ աթըճի,
Կէմիճիլար կէմ սուրուճի
Սալտաուլարտր ճան ալըճի.
Հապ հսիր օլտուխ կաուր ալինտա:

Դօփճիլար՝ դօփ աթա պիլմազ,
Կէմիճիլար՝ կէմ սուրա պիլմազ,
Փատիշահտան իմտատ օլմազ.
Հապ հսիր օլտուխ, հապ հսիր օլտուխ
Սարի Մօսկով ալինտան:

Այս բանաստեղծությունը մեզ հասել է ուշ շրջանի ձեռագրով (XIX դար): Գրչին հայտնի չի եղել, որ ընդհակառակը «Զօրէղ փշումն» սկսվածով երգն է երգվել «Սարասկէրտր էմին փաշայ» երգի եղանակով: Այս եզրակացություն համար մեզ հիմք է ծառայում Գրիգոր Օշականցու 1787 թ. ինքնագիր Տաղարանը, ուր հեղինակը առաջարկում է իր «Զօրէղ փշումն» երգը երգել հայատառ թուրքերին հիշյալ երգի եղանակով (Մատենադարան, ձեռ. № 10291, էջ 26ա): Այս հանգամանքը ևս թույլ է տալիս, կարծելու, որ խաղը ստեղծվել է XVIII դարում, հավանաբար՝ 60—70-ական թթ.:

Վերանորոգվող գեղարվեստական գրականությունը անդրադարձնում է այն մեծ բեկումը, որ կատարվում է ռուսական երկնքի տակ աբստրակտացիայի իրավատնտեսական կյանքում: Առաջին անգամ XVIII դարում գրական ստեղծագործությանը այս կամ այն չափով նյութ են տալիս, գործողության վայր, պատկեր, առարկա են դառնում ռուսական առանձին քաղաքներ, գետեր, բերդեր, եկեղեցիներ՝ Մոսկվա, Պետերբուրգ, Աստրախան, Նոր Նախիջևան, Դոն, Վոլգա, Կրեմլի տաճար, Ս. Կատարինե եկեղեցի, Ս. Դիմիտրիի բերդ և այլն: XVIII—XIX դդ. առաջին երեք տասնամյակների բանաստեղծության մեջ մի ամբողջական շարք են կազմում միայն Նոր Նախիջևանի հիմնադրմանը նվիրված երգերը: Ահա դրանցից հնագույններից մեկը, որ տպագրվել է 1780 թ. ռուսական «Գաղեստայում»: 1780 թ. գարնանը Նոր Նախիջևանի հիմնադրման առթիվ կազմակերպում են մեծ հանդիսություններ, որոնց արձագանքները տպագրվում են թերթերում: Նույն թվականի ապրիլին Նորին կայսերական մեծության ակադեմիան, «Գաղեստայում» վերահիշյալ հանդիսությունների շուրջ տպագրված նյութերից ելնելով, ըստ յուր սովորության և ի պատիվ, և ի փառս Եկատերինա Երկրորդի հանձնարարում է գրելու մի բանաստեղծություն և այն տպագրում Նույն «Գաղեստայում»:

«Արդ զհանգամանս հանդեսիս այսմիկ տեսեալ իւրուհոյ կայսերական մեծութեան համալսարանին ի յանձնարարութեան գիրն բերդին սրբոյն Դիմիտրիի, ըստ սովորութեան իւրում ի պատիւ և ի փառս մեծին կայսերուհոյն, յինքենէ շարադրեալ էր զըստորագրեցեալ զերգս ոտանսւոր և ի նոյն Կազեաի տպեալ»¹¹: 1794 թ. «Ազդարարը» անդրադառնում է պատմական այդ ուշադրավ իրադարձությանը և տպագրում «Գաղեստայում» հրապարակված հաղորդագրությունների և այդ բանաստեղծության հայերեն թարգմանությունները:

Ընդ ծով Կարմիր անթաց ոտիւր Իսրաէլի հին անցանէ,
Բարձր բաղկաւ, հզօր ձեռօք յազատութիւն ժամանէ.
Յանարգ լծոյ, ծառայութեան յանձնս փառս ելանէ,
Յարգունարար մեզր և կռթին բզիւղ Երկիր մտանէ.
Նմին նման ալժըմ անդեալ ի յաղմրկաց պատճառէ,
Յաղթական երգս Երզնէ այսօր թագուհոյդ Եկատերինէ:
Խմբիւր պարեն, սակս փրկութեան ժողովք քրիստոնէական,
Զի զգաւազանն իշխանութեան ծաւալ տեսին ի Նախիջևան.
Զազդու ձայնն կայսերական է՝ առ ունկն ազպաց համայն,
Նայ հրամայէ միանգամայն հնազանդին չորքն ամենայն¹².

Ո՞վ է այս երգի հեղինակը՝ չգիտենք: «Զի զգաւազանն իշխանութեան ծաւալ տեսին ի Նախիջևան» տողը թույլ է տալիս կարծելու, որ նրա հեղինակը հայ մտավորական է, նորնախիջևանցի, որ առնչվում է Պետերբուրգի կայսերական ակադեմիային և հանձնարարություն ստանում, հավուր պատշաճի, գրելու ռուսերեն մի երգ: Այստեղ կարևորը այն է, որ Նոր Նախիջևանի հիմնադրության առթիվ ժողովուրդը ներբողում է իր երախտավորին՝ բանաստեղծությամբ: Ռուսաստանին է վերապահվում հայ և քրիստոնյա այլ ազգերի ազատության հարցը: Ահա Նոր և առաջադեմ այն ըմբռնումը, որ արձագանք է ստանում հայ բանաստեղծության մեջ XVIII դարում:

¹¹ «Ազդարար», 1794, էջ 40:

¹² Նույն տեղում:

Գաղափարական նույն դրոշմը ունի նաև «Թագուհի տասնամեայ կրոց ծիրանի» սկսվածքով բանաստեղծությունը։ Այն հյուսվել է Եկատերինա Երկրորդի գահակալության տասներորդ տարեդարձի առիթով։ Հետագայում հայերեն է թարգմանել նշանավոր հայագետ, ռուսագետ, արվեստաբան, բանաստեղծ և թարգմանիչ Մինաս Տլրապիզոնցի Բժշկյանը։ Մեզ անծանոթ հեղինակի այս բանաստեղծությունը բացահայտում է Ռուսաստանի ազատագրական նկրտումների համազգային միտումը, մեկնաբանում Ռուսաստանի բացառիկ դերը ոչ միայն հայ, այլև եվրոպական ժողովուրդների ազգային ազատագրության գործում։

Պերճ անուամբ հանգիստ, մայր՝ բարութեամբ լի,
Տէր քե տայ խաղաղ վրդովեալ երկրի,
Հանգիստ Ռուսիոյ յայլ սահման հոսի.
Ընու բարութեամբ տեղիս շրջակայ,
Պատերազմին քո զօրք ընդգէմ մարտի.
Ջէն քո խաղաղէ զաշխարհ եվրոպայ¹³։

Հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների գրական արձագանքների մեջ մի առանձին փայլու իմացական ուժ ունի նաև «Խորհրդածություն զԱնի քաղաքէ» քնարական պոեմը։ Գաղափարի, հույզի, պատկերների բանաստեղծական մի յուրովի ձուլվածք է այն, ուր թանձրանում է հայ ժողովրդի դարերի սրտամոլությունը։ Գարձյալ անանուն և հավանորեն դարձյալ նորնախիջևանցի բանաստեղծի նորաշունչ ու հոգեպարար այս երկը, որ ալիշանական ազգային բանաստեղծության բույրն ունի, գրված կարող է լինել XVIII դարի վերջում կամ ավելի ուշ՝ XIX դարի առաջին քառորդում, համեմայն դեպս մինչև 1828 թ.։ Ազատասեր բանաստեղծը, ընդհանուր պատմության թատերաբեմում հայ ժողովրդի տեղն ու դերը մատնանշելով, նրա մաքառումներով լի ծանր կյանքի ու պայքարի հաշվեկշիռն անելուց հետո, հաստատում է պատմական այն ճշմարտությունը, թե բուրբից խաբված ու ճնշված, տառապած ու տռնջված, աշխատապաշտ, տոկուն և իմաստուն իր ժողովրդի վերականգնության համար ամենավճռական քայլերը կատարվում են ռուսական հողում...

Թագուհին Մոսկովայ ի սիրոյ, ի շնորհաց
Հան զիմ աղգդ ի լծոյ բռնաւոր թաթարաց,
Ած զձեզ յիւր աշխարհ, ետ ձեզ կեանս ազատից,
Կեալ, շուել անձն իւրոց, ըստ իւրեանց հաճոյից։
Ուր յառաջն տիղմն և գէճ, անդ այժմիկ հայկական,
Բարձրանայ բարեզարգն մարտագաշտն Իջևան,
Հոսայ հեզ՝ Տօնաւիս, ոռոգեա՝ զայգ երկիր,
Երջանիկ քո եզերք, յորս հանգչի ազգ ընտիր։

«Մոսկովա թագուհու» շնորհները բացում են հայության վերանորոգության ճանապարհը, բանաստեղծը մեկնում է իր շինարար ժողովրդի անհատականության, նրա ազգային նկարագրի կենսական գծերը։

13 Մ. Բժշկյան, Քերականութիւն ռուսերէն—հայերէն, Վենետիկ, 1828, էջ 303։

Զազգդ այդ զոսկին թանկ ո՛չ վատնէ ինչ ունայն,
Այլ յայլ ինչ բարձրագոյն և յայլ ինչ պիտեան,
Տալ զկեանս զառկաց, հրեշտակաց համանման,
Կրթութիւն և ուսումն, բարի վարք մարդկութեան:
Լոնացին փողք, դրուատք, թռչնեցին և դափնիք,
Այլ ձեր սէր հայրենեաց մնասցի միշտ ողջիկ:
ՑորՀափ կայ ազգ հայոց, իւր ի փառս հնութեան,
Զնախառնողոյնս յարքայից ընկալցի Նախշուան¹⁴:

Վշտաշատ բանաստեղծը Անիի ավերակներից ուղղում է իր հայացքը հայոց դառնավետ անցյալին և ապա հույսերով լեցուն խորհրդածում:

Ուշագրավ է և այն, որ դարերի ճամփա անցած հայ ներբողական բանաստեղծությունը ստանում է բաղաբական մի նոր շեշտ ևս: Սահակ Երեց, Գրիգոր Կամպանյան, Պողոս Կաղզվանցի, Ստեփաննոս Խոջումյանց, Գևորգ Խուբով, Սերովբե Պատկանյան, Ասլան Աթարեկյան, Մինաս Բժշկյան և անանուն շատ բանաստեղծներ ու արձակագիրներ մեծարում են ժամանակակից հայ, ռուս պետական, ռազմական գործիչներին՝ առաջադեմ թագավորներին, իշխաններին, զորավարներին, զինվորներին, գիտության ու մշակույթի նշանավոր անձանց՝ Դավիթ Բեկ, Մխիթար, Տեր Ավետիս, էմին փաշա, Հովհաննես Իշխան, Մինաս Իշխան, Պետրոս Առաջին, Եկատերինա Երկրորդ, Աղեքսանդր Առաջին, Ցիցիանով, Պասկևիչ և այլք: Ակնառու է. որքան հառաջանում ենք XVIII-ից դեպի XIX դարը, այնքան հարստանում է հայ-ռուս բարեկամության ու զինակցության պատմությունը հերոսական դրվագներով, այնքան բազմանում են և զրական երկերն ու ներբողները: Այս բանում համոզում է վերոհիշյալ ժողովածուի գոյության փաստը: Ս. Պատկանյանը 1796 թ. գրած իր բանաստեղծություններից մեկում ազդարարում է ի լուր աշխարհին, թե ռուսաց երկրի, նրա ողորմած թագուհու շնորհիվ ազատվեց հայ ժողովուրդը ցավից, անհանգստությունից.

Ռուսդաց Տէրն արթնացաւ և վեհափառն մեծացաւ...

Սէր կայսերուհւոյն բազմացաւ, գթութիւնն առատացաւ...

Որում տացէ տէր զկեանս, զի գլուխք մեր կացցան անցաւ¹⁵:

Մինաս Տրապիզոնցի Բժշկյանը Պետրոս Առաջինին պատկերում է իբրև հյուսիսից ճառագող մի աստղ, որ լուսավորում է անծայրածիր Ռուսաստանը և անջինջ հիշատակ թողնում մարդկության սրտում.

Լայնածավալ սիրտ վեհափառ քաջառ,
Արտադրիչ գործոց շնաշխարհիկ փառաց,
Զաշխարհ զպետութիւն կարդեալ զերունակ,
Կանգնեն պէրճապէս զսնմահ յըշատակ:

Պետրոս դիցազնեայ առաքինին քաջ,
Ազանց բոլորից տարացոյց բարեաց,

¹⁴ «Նոյեան աղանի», Մոսկվա, 1853, № 45:

¹⁵ «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 375: Այս բանաստեղծության անդրադառնում է Պ. Հակոբյանը «Արևելյան Հայաստանի ազատագրումը և հայոց նոր գրականությունը» հոդվածում (ՀՍՍՀ ԴԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1978, № 10, էջ 28):

Գերահրաշ փայլիչ ազգին իւր ռուսաց.

Նոր աստղ ծագեաց հիսիսականաց¹⁶:

Հայ և ռուս ժողովուրդների բարեկամական կապերին, ազգային-ազատագրական շարժման մեջ նրանց զավակների միատեղ պայքարի առաջին զորավագներին նվիրված ներբողական բանաստեղծությունների մի շարք են կազմում Մտ. Խոջումյանցի, Ս. Պատկանյանի, Գ. Մելիքսեդեկյանի, Մ. Բժշկյանի և առավել նոր շրջանի բանաստեղծ Թեոդորոս Շիրակունու երգերը:

Աւանիկ եկեալ հասեալ են,
Ո՛հ, թէ զինչ սակաւաթիւ են.
Ի թակարդ անկեալ որսիկ են,
Թողէք, զի յառաջ եկեսցեն.
Անուն քո բարձր է, մեծ իշխան,
Շա՛հ կարծեա քեզ և ոչ իսն¹⁷,—

Կրում է Ս. Պատկանյանը: Մա Գանձակի հերոսական մարտերին նվիրված պատմաքննարակաւ պոեմ է, հայ-ռուսական զինակցության շուրջը հյուսված առաջին մարտաշունչ ստեղծագործությունն իր տեսակի մեջ: 120 տողանոց այս պոեմը բաժանված է ենթազույգների և ունի հետևյալ ընդարձակ խորագիրը. «Երգ վասն սքանչելի յաղթութեան օգոստոսիառ կայսերն ամենայն ռուսաց, ամենահզօր կուսակալ Պավել Դիմիտրի Յիցիանովին, որով էառ զանառիկ ամրոցն էղիսաբէդուպօլիս քաղաքին, յօրինեալ ի խոնարհագոյն ծառայ տիրացու Սերովբէէ Տէր-Պետրոսեան Թիֆլիզու հայոց վարժապետ Կոստանդնուպօլսեցւոյ»:

Նույն հաղթական ոգին է տիրում Թեոդորոս Շիրակունու բազմաթիվ բանաստեղծություններում.

Մանկունք հայոց կարդան, կեցցէ,
Կացցէ՛ կայսրն Ռուսաց,
Կեցցէն՝ կեցցէ՛ն, հաւերժ կեցցէն,
Զօրք զորաւորք ռուսաց...

Զեղ աւետիս կարդամ տյսօր,
Բագրատունի արքայից,
Եկն այցելու շիրմաց ձերոց,
Արքայն Ռուսաց առ գահից¹⁸:

Գևորգ Մելիքսեդեկյանը հայոց անցյալի քաջերի՝ Արամի, Պարույրի, Տիգրանի, Արշակի, Տրդատի, Վարդանի, Մինասի, Դավիթ Բեկի և այլոց սխրանքների օրինակներով ոգեշնչում է հայ ժողովուրդին՝ միահամուռ, «ինչ-

¹⁶ Մինաս վրդ. Բժշկեան, Համառօտ նկարագիր վարուց երևելի անձանց. Վենետիկ, 1850, էջ 712:

¹⁷ «Երգք Սերովբէ վարժապետի Պատկանեան», Մոսկվա, 1857, էջ 39—40, Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 8216, էջ 281ա: Խորագիրը ներկայացվում է ըստ ձեռագրի:

¹⁸ Նույն տեղում, ձեռ. № 3150, էջ 206բ—207բ:

պէս լեառն հայրենի», «օրհնեալ Ռուսաստանի» օգնութեամբ ոտքի կանգնելը նդդեմ թշնամու.

Արդ օրինակ, կայ մեզ արի
Սինեաց իշխանս այս քաջ Դաւիթ,
Որ երկոքեամբ միարանեալ,
Գործեաց զայնս, զորս գործեաց Դաւիթ,
Զի քան զՅովար անցոյց
Միսթարն և Աւետիքն...
Ուստի թէ արդ, ևս, միարանեմք.
Անձն իւր անձնէ նոր քաջ Դաւիթ¹⁹,

Միջնադարյան բանաստեղծութեան մեջ, XIII—XIV դդ. ի վեր, բարձրանում է էջմիածնի պատկերը՝ իբրև հայութեան հոգևոր և պետական կյանքի կենտրոնի²⁰: Նոր ժամանակներում, XVIII դարում և XIX դարի առաջին երեք տասնամյակներում, էջմիածինը ներկայանում է նաև մի նոր դերով՝ արդեն իբրև հայ հասարակական մտքի ռուսական կողմնորոշման ջահակիր: Վերելում հիշված բանաստեղծներից շատերը օրհնում են քրիստոնեյա Ռուսաստանի, օգոստոսական կայսեր, ռուսական ուղղափառ եկեղեցու և էջմիածնի կրոնաքաղաքական միասնությունն ու դաշինքը.

Գոյ քեզ այցօղ և ապաւն ինքնակալ կայսր մեր տօնելի,
Մեծն ԱՊ սրբացեալ անուն պաշտելի,
Որ ի լեառնէ սուրբ աթոռոյն խոնարհեալ հայի ի մեզ գթալի,
Հայցեա, զի և սուրբ աթոռ նորին հաստատեալ, մնացէ
պանծալի, յոյժ պանծալի²¹,—

Երգում է Գ. Մելիքսեդեկյանը: Հայրենասեր բանաստեղծը հայրենիքի և ազգային եկեղեցու շահերը տեսնում է ամուր ու անքակտելի միասնութեան մեջ: Դա, ինչպես նկատեցինք, վերաճողովող հայ գեղարվեստական գրականութեան առանձնահատուկ գծերից մեկն է: Ռուսական կողմնորոշման բոլոր գործիչները, սկսած Իսրայել Օրուց, Հովսեփ Էմինից, ներառյալ Շահամիրյանները, Գրիգոր Կամպանյանն ու Պողոս Կաղզվանցին և ալլը, աշխարհայացքային այդ ելակետը ունեն:

Հայտնի է, որ XVIII դարի վերջերից ի վեր հայ-ռուսական տնտեսական-քաղաքական և մշակութային կապերի պատմության մեջ իուշոր դեր են կատարում լազարյանները: Թվում է, թե այդ ազգատոհմի Պետերբուրգում ծավալած գործունեության գրական առաջին արձագանքներն են Ստեփանոս Խոջումյանի «Բան գովասանութեան» արձակ և շափածո հիշատակարան ներբողները: Հեղինակը դրանք գրել է Հովհաննես Կաղարյանի ջանքերով 1782 թ. Պետերբուրգի հայոց Ս. Կատարինե եկեղեցու կառուցման առթիվ: «Բան գովասանութեան» շարադրեալ ի պատիւ գերամեծար, պերճապատիւ ազնիւ աղնեայ Յովհաննէս իշխանին հայոց, յաղաղ եկեղեցաշինութեան, որ կառուց անուամբ սրբուհոյ և մեծի կուսին Կատարինէի, որ ի Սանկտ Պետեր-

¹⁹ Նույն տեղում, ձեռ. № 10139, էջ 62ա:

²⁰ Այս մասին (Գևորգ Խուրովի և Ս. Պատկանյանի համապատասխան երգերի առնչությամբ) տե՛ս նաև «Պետրոս Ղափանցի» դրբում (Երևան, 1969, էջ 36—38):

²¹ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 491, էջ 8ր:

բուրդ կայսերանիստ քաղաքի»։ Արձակ և չափածո այս ներբողներում Ստ. Խոջումյանը Ռուսական հողում հայկական եկեղեցու շինությունը դիտում է իբրև հայոց փրկության երևույթ հյուսիսից և մեծարանքի, երախտագիտության անթիվ տողեր նվիրում իշխան Հովհաննես Լաղարյանին։

Տիրողն մեծ Ռուսաստանի,
Տայ քեզ պատիւ ըստ պատշանի,
Հանճարամիտ. գործով արի,
Համայն մարդկանց խորհիս բարի:
Ամենեցուն էս ցանկալի,
Աղնիւ տոհմիւ տամբ գովելի,
Յաւուր դարի քոյոյ մեծի,
Յազգդ քոյ ըզքե բարձր պարծիւ²²:

«Հալեաց և տէս, ո՛վ ղուարթդ մտօք և զօրուցեալդ արագահաս օգնականութեամբն երկնային,— գրում է բանաստեղծը, այս անգամ արձակ ներբողում,— թէ որքան մեծ է ի քեզդ աւանդեալ խորհուրդ՝ կառուցանել... ի կողմանս հիւսիսոյ զերևոյթն փրկութեան մերոյ...»²³։ Արձակ բանաստեղծության եզրամիակիչ հատվածում Ստ. Խոջումյանը ներբողում է նաև Եկատերինա Երկրորդին, հայերի պաշտպան այն թագուհուն, որ անձամբ ինքն է որոշել հայոց եկեղեցու շինության տեղը և կայսերական հրաման արձակել այդ առթիվ. «Օգոստոսիառ կայսերուհւոյ շնորհեալ տեղն սուրբ եկեղեցւոյ և սիրահրաւեր բարձու հրամանաւ նորին կառուցեալ...»։

Ասացեալ զայս իմոյ բանի,
Տօնի սրբոյ Կատարինի,
Որոյ անուամբն զեկեղեցի,
Շինեալ ազնիւ Յովհաննիսի:
Ի դարուս երկրորդ Կատարինի,
Կայսերուհւոյ հզօր մեծի.
Եւ ժառանգի նորին գահի,
Կայսերազն մեծ իշխանի.
Ի Պետերբուրգ մեծ քաղաքի,
1782 թուական փրկչի,
Քըսան և ութ նոյեմբերի,
Աւարտ տառիս վերաբերի²⁴:

Այսպես ուրեմն, հայոց նոր և ընդհանուր վերանորոգության շարժումը խորապես ներգործում է նաև ժամանակի հայ գրական-ստեղծագործական մտքի վրա։ Գեղարվեստական գրականությունը XVIII դարում կրում է ձևավորվող ազգային քաղաքական նոր հոսանքների ազդեցությունը և պաշտպանում է Ռուսական կողմնորոշման առաջադեմ գաղափարը։

22 Նույն տեղում, ձև. № 6377, էջ 22 բ։ Խոջումյանցի «Բան գովասանութեան»-ը համառոտ ձևով տպագրված է «Դիւան Հայոց»-ում։

23 Նույն տեղում, ձև. № 6377, էջ 10ա։

24 Նույն տեղում, էջ 22 բ—23 ա։

**ЛИТЕРАТУРНЫЕ СТРАНИЦЫ
ИЗ ПРОШЛОГО АРМЯНО-РУССКИХ ОТНОШЕНИЙ**

Доктор филол. наук Ш. Л. НАЗАРЯН

(Резюме)

В сообщении говорится об армянских литературных произведениях XVIII в., посвященных армяно-русским дружественным связям. Мы останавливаемся на тех произведениях, которые оставались до сих пор вне поля зрения исследователей. Факты приводят к заключению, что определенная часть армянской художественной литературы XVIII в. имеет ярко выраженную русскую ориентацию.